Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» պետական ոչ առևտրային
կազմակերպության գիտական խորհրդի
2021 թվականի հունվարի 22-ի N 6 - 3 որոշմամբ
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
_____ Դ. Ռ. Գալոյան
_____ 2021 թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՀՊՏՀ) պրոֆեսորադասախոսական կազմի (պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս)[1] վերապատրաստման և ատեստավորման կարգը, չափանիշները և պայմանները, որոնց հիման վրա իրականացվում է նրանց մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման գործընթացը:

---

[1] կանոնակարգում դասախոս բառն օգտագործվում է նաև լայն իմաստով (պրոֆեսորադասախոսական կազմի անդամ)

2. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, ՀՊՏՀ-ի կանոնադրությունը և ներքին իրավական ակտերը:

3. ՀՊՏՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումը և ատեստավորումը պարտադիր և շարունակական գործընթացներ են, որոնք դասախոսը պետք է անցնի առնվազն 5 տարին մեկ:

4. ՀՊՏՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման և ատեստավորման գործընթացները նախորդում են ՀՊՏՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման ընտրության բաց մրցույթին և դրան մասնակցելու պայմաններից մեկն են: ՀՊՏՀ-ում չաշխատող հավակնորդները ևս ներգրավվում են սույն կանոնակարգով նախատեսված ատեստավորմանը:

Վերապատրաստումը աշխատողի՝ օրենսդրորեն ամրագրված հիմնական իրավունքներից մեկն է և գործատուի պարտականությունը՝ նրան տրամադրելու այդ իրավունքն ու ապահովելու դրա իրացումը:

Վերապատրաստումը դասախոսի մասնագիտական և ընդհանուր նոր գիտելիքների ու փորձի, դասավանդման մեթոդների, կարողությունների ու հմտությունների կատարելագործման շարունակական գործընթաց է, որի առաջնահերթ նպատակն է բավարարել դասախոս մասնագետների պահանջմունքները՝ ստանալու ոլորտի նորագույն գիտական ձեռքբերումների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը և առաջատար միջազգային ու հայրենական փորձը:

Ատեստավորումը դասախոսի մասնագիտական և ընդհանուր գիտելիքների, դասավանդման մեթոդների, կարողությունների ու հմտությունների՝ զբաղեցրած

պաշտոնի պահանջներին և որակավորման չափորոշիչներին համապատասխանության որոշման գործընթաց է:

5. Վերապատրաստման և ատեստավորման ընդհանուր նպատակն է ապահովել դասախոսի՝

1) մասնագիտական գիտելիքի արդիականացումը և խորացումը,

2) մանկավարժական պատրաստվածության պատշաճ մակարդակը և գործնական հմտությունների, հաղորդակցության եղանակների ու միջոցների կատարելագործումը:

6. ՀՊՏՀ-ի դասախոսական հիմնական կազմի վերապատրաստման և ատեստավորման գործընթացները կազմակերպվում են ՀՊՏՀ-ի կողմից և նրա ֆինանսական միջոցներով ու հասանելի են բոլոր դասախոսներին:

7. ՀՊՏՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստման ծրագրերը մշակվում են համապատասխան ամբիոնների կողմից, քննարկվում ամբիոնների նիստերում և դրական եզրակացությամբ ներկայացվում ֆակուլտետի գիտական խորհրդի և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հաստատմանը:

(7-րդ կետը փոփ., խմբ. 08.02.2022 N 8-6)

8. ՀՊՏՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման և ատեստավորման գործընթացների կազմակերպման պարտականությունը դրվում է ՀՊՏՀ-ի շարունակական կրթության բաժնի վրա:

(8-րդ կետը փոփ., խմբ. 08.02.2022 N 8-6)

9. ՀՊՏՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման գործընթացները կազմակերպվում են որակավորման բարձրացման (մասնագիտական և մանկավարժական պատրաստվածության) ծրագրերով, որոնք, ինչպես նաև դրանց կատարմանը վերաբերող նյութերը տեղադրվում են ՀՊՏՀ-ի կայքում:

Մասնագիտական պատրաստվածության ծրագրով վերապատրաստումն ապահովում է մասնագիտության բնագավառի արդի հիմնախնդիրների և նոր հմտությունների յուրացումը՝ ՀՊՏՀ-ի կրթական համապատասխան ծրագրերին և դասընթացների ծրագրերին համապատասխան:

(9-րդ կետի 2-րդ պարբ. փոփ., խմբ. 08.02.2022 N 8-6)

Մանկավարժական պատրաստվածության ծրագրով վերապատրաստումն ապահովում է դասավանդման հիմունքների նոր մեթոդների, հոգեբանության և մանկավարժության տեսական գիտելիքների յուրացում, խոսքի տեխնիկայի հմտությունների զարգացում, համարժեք ռեֆլեքսիա, ուսանողի հետ պատշաճ հաղորդակցության և նրա արժեհամակարգն ու գիտելիքերն անաչառ գնահատելու ունակություն:

10. Մրցութային կարգով պրոֆեսորադասախոսական պաշտոնների տեղակալմանը մասնակցող թեկնածուները պարտավոր են ներկայացնել վերապատրաստման և ատեստավորման ՀՊՏՀ-ի կողմից սահմանված վավերապայմաններով փաստաթուղթ (հավաստագիր, վկայական):

11. Հարգելի պատճառով (հիվանդություն, գործուղում և այլն) վերապատրաստմանը չմասնակցած դասախոսն իրավունք ունի մասնակցելու հաջորդ վերապատրաստմանը:

12. Վերապատրաստման առավելագույն ժամաքանակը 40 ժամ է, որից մասնագիտական՝ 30 ժամ, մանկավարժական՝ 10 ժամ:

13. Վերապատրաստվող դասախոսը չի ազատվում աշխատանքային պարտականությունների կատարումից: Գործատուն վերապատրաստվող դասախոսի համար ապահովում է բոլոր անհրաժեշտ պայմանները՝ համատեղելու աշխատանքը և վերապատրաստման դասընթացը:

14. ՀՊՏՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման գործընթացներն իրականացվում են համապատասխան ոլորտի փորձառու՝ վերապատրաստման ծրագրով կրթական, խորհրդատվական կամ մասնագիտական

աշխատանքի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ ունեցող, պրակտիկ աշխատողների, դասախոսների և գիտնականների կողմից:

15. ՀՊՏՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ատեստավորումն իրականացվում է հետևյալ բաղադրիչներով՝

1) մասնագիտական պատրաստվածության ստուգում և գնահատում,

2) մանկավարժական պատրաստվածության ստուգում և գնահատում:

16. Դասախոսի վերապատրաստումն ավարտվում է ատեստավորմամբ (մասնագիտականը՝ 100 միավոր գնահատմամբ, մանկավարժականը՝ մասնակցության արդյունքներով), որով որոշվում է ստուգվողի՝ ուսուցման ծրագրով ստացած գիտելիքի, հմտության և կարողության համապատասխանությունը նրա զբաղեցրած պաշտոնի պահանջներին և որակավորման չափանիշներին:

(16-րդ կետը փոփ., խմբ. 08.02.2022 N 8-6)

17. Մասնագիտական ատեստավորման արդյունքում՝ 60-69% ապահոված դասախոսը պարտավոր է վերապատրաստվել և անցնել ատեստավորում 2 տարի անց, 70-79%-ի դեպքում՝ 3 տարի անց, 80-89%-ի դեպքում՝ 4 տարի անց, 90-100%-ի դեպքում՝ 5 տարի անց:

18. Ատեստավորում չանցած (քննական գնահատման 60%-ը չապահոված և (կամ) ստուգարքը չանցած) դասախոսն իրավունք ունի մինչև իր աշխատանքային պայմանագրի ավարտը երկրորդ անգամ անցնել վերապատրաստում (իր դիմումով ու իր մասնակի վճարմամբ) և ատեստավորում կամ միայն ատեստավորում:

19. ՀՊՏՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ատեստավորումն անցած դասախոսներին տրվում է ՀՊՏՀ-ի կողմից սահմանված վավերապայմաններով փաստաթուղթ (հավաստագիր, վկայական), իսկ ատեստավորումը չանցած դասախոսներին՝ վերապատրաստման դասընթացների մասնակցության տեղեկանք:

20. Ատեստավորում անցած դասախոսը ձեռք է բերում ՀՊՏՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման մրցույթին մասնակցելու իրավունք:

21. Երկու անգամ ատեստավորման սահմանված նվազագույն շեմը չհաղթահարած անձի հետ, որպես դասախոսի, աշխատանքային պայմանագիր չի կնքվում:

22. Մասնագիտական ատեստավորման անցկացման ձևը որոշում է ամբիոնը՝ ելնելով ամբիոնի ուղղվածությունից, դասավանդվող առարկաների մասնագիտական ուղղվածությունից: Ատեստավորման անցկացման ձևը քննարկվում է ամբիոնների նիստերում և դրական եզրակացությամբ ներկայացվում ֆակուլտետի գիտական խորհրդի և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հաստատմանը:

(22-րդ կետը փոփ., խմբ. 08.02.2022 N 8-6)

23. Ատեստավորման փաստաթղթերը պահվում են դասախոսի անձնական գործում:

24. Դասախոսի ատեստավորման արդյունքների մասին որոշումը կարող է բողոքարկվել դատական (վարչական) կարգով:

25. Սույն կանոնակարգով սահմանված դրույթների խախտման դեպքում ատեստավորման արդյունքը դատական կարգով կարող է ճանաչվել անվավեր:

26. Սույն կանոնակարգով սահմանված ատեստավորման վերաբերյալ դրույթները, որպես համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման ընտրության բաց մրցույթին մասնակցելու պարտադիր պայման, ուժի մեջ են մտնում 2022 թվականի հունվարի 1-ին: